27824
336.2
Ու-45

ԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ-ՆԵՐԻ, ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ, ՆՈՒՅՆՊԵՍ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱ-ՏԵՐԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

Յերևան 1929 թ.

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

336.2
Ոլ-45
սպ

172

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ, ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ, ՆՈՒՅՆՊԵՍ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ
Публичная Библиотека

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ՓԻԼԻԹՈՂԿՈՄԻՏԷԻ

Ցերեւան 1929 թ.

149657

27827

13.11.2013

Գրառեպ. № 1755 (բ) Տիրաժ 1000

Հայպոլիգրաֆի 2-րդ տպ. պատ. № 2185

Ուղղակի հարկերի որենսդրություններով նախատեսված պահանջները կատարելու վերաբերյալ տնայնագործների, արհեստավորների, նույնպես յեվ արդյունաբերական ձեռնարկատերերի պարտականությունները։

I. ԱՐՀԵՍՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Համաձայն պետական արհեստահարկի կանոնադրության 1 հավելվածի 1-ի հոդվածի՝ բոլոր տնայնագործները և արհեստավորները, վորոնք զբաղվում են արհեստով՝

ա) Ընտանիքի անդամների ոգնությամբ, առանց վարձու աշխատանքի գործադրության։

բ) Միանձնաբար, յեթե այդ արհեստով զբաղվող անձանց յեկամուտը անցնում է նախընթաց դրույքային տարվա ընթացքում գյուղական վայրերում ըստ միասնական գյուղատնտեսական հարկի չհարկվող մինիմումից, իսկ քաղաքային վայրերում պետական յեկամտային հարկի հարկատուների համար սահմանված չհարկվող մինիմումից № 2 ցանքի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կետ «բ» նշված արհեստներով զբաղվող անձինք, այդ արհեստներով զբաղվելու առաջին տարվա ընթացքում հարկի յենթակա չեն։

Պարտավոր են վերցնել ընթացիկ տարվա սեպտեմբերի 30-ից վոչ ուշ համապատասխան գոտու անձնական զբաղմունքի 1-ին կարգի տոմարագրական վկայական։

2. Նույնը 6-րդ հոդվածի—տնայնագործական և արհեստային զբաղմունքները հավասարապես և անտառային, ձկնորսական և լեռնային զբաղմունքները, վոր կատարվում են մի վարձու բանվորի ոգնությամբ, անկախ այդ աշխատանքում ընտանիքի անդամների ունեցած մասնակցությունից։

Պարտավոր են ընթացիկ տարվա սեպտեմբերի 30-ից վոչ ուշ վերցնել, համապատասխան գոտու անձնական զբաղմունքի 2-րդ կարգի տոմարագրական վկայական։

3, Նույնը 14-րդ հոդվածի—տնայնագործական և արհեստային զբաղմունքները, հավասարապես յեվ անտառային, ձկնորսային և լեռնային զբաղմունքները, վորոնք կատարվում են յերկու վարձու բանվորների ոգնությամբ, ընտանիքի անդամների մասնակցությունից անկախ։

Պարտավոր են ընթացիկ տարվա սեպ-

տեմբերի 30-ից վոչ ուշ վերցնել համապատասխան գոտու անձնական զբաղմունքի 3-րդ կարգի տոմարագրական վկայական։

4. Այդպիսով յերեք հոդվածներում հիշված տնայնագործները և արհեստավորները մինչև դրույքային տարվա սկսվելը, հաջենայն դեպս ընթացիկ տարվա սեպտեմբերի 30-ից վոչ ուշ, պարտավոր են դիմում տալ Պետ. բանկի Գանձմասին, տրվյալ դրույքային տարվա կամ այդ տարվա գործողության ժամանակաշրջանի համար այս կամ այն կարգի տոմարագրական վկայական ստանալու մասին, վորի համար դրոշմատուրք չի վճարվում։

5. Ի բացառություն սույն ցանկի 1, 6 և 14 հոդ. հոդ. շոշանառության հանդեպ տոկոսային հարաբերությամբ վորոշվող հարկի են յենթարկվում, ներքոհիշյալ զբաղմունքները և ձեռնարկությունները՝

ա) Մասնավոր ապրանքային այն աղորիքները, վոր զբաղվում են բացառապես կամ մասամբ մասնավոր անձանց գնած կամ այդ աղորիքների տերերի մթերած իրբև ալյուր վերավաճառելու նպատակով հացահատիկների վերամշակումով — բացառու-

թյամբ քամաղացների նայև մեկ և յերկու աչքանի ջրաղացների կամ մեխանիկական շարժիչ ունեցող աղորիքների։

բ) Յուղագործական արդյունաբերության արեվածաղիկի յուղ արտադրող մասնավոր ձեռնարկությունները։

գ) Կաշու հում նյութերն վերամշակող մասնավոր ձեռնարկությունները։

դ) Ակցիզով հարկվող պարֆյումիրական և կոսմետիկական ապրանքների արտադրությամբ զբաղվող մասնավոր անձինք ու ձեռնարկությունները։

6. Բոլոր մնացած տնայնագործական և արհեստային զբաղմունքները և ձեռնարկությունները, վորոնք ոգտվում են յերեք և ավելի բանվորի վարձու աշխատանքով, յենթարկվում են շրջանառության հանդեպ տոկոսային հարաբերությամբ վորոշվող հարկի վճարման, պահպանելով հարկի վճարման համար հետևյալ ժամկետները՝

ա) 30-րդ հոդվածի համաձայն — տոմարագրական վկայականները վերցնելիս, մինչ դրույքային տարվա սկիզբը, մացվում է նախանցյալ տարվա հարկի դրույքի 25% ի չափով կանխավճար։

բ) Նույնը նոյեմբերի 15-ին — նախանցյալ տարվա հարկի դրույքի 20%-ի չափով։

գ) Նույնը հունվարի 15-ին — նախանցյալ տարվա հարկի դրույքի 20%-ի չափով։

դ) Անցյալ տարվա հարկի դրույքի և առաջին յերեք ժամկետների կանխավճարների գումարի միջև յեղած տարբերությունը մացվում է հավասար մասերով մարտի 15-ից և հունիսի 15-ից վոչ ուշ։

յե) 28-րդ հոդվածի համաձայն — վերջնական հաշվետեսությունը կատարվում է հարկի դրույքի վորոշումից հետո։ Դրույքի և մացրված հինգ կանխավճարների միջև յեղած տարբերությունը հարկատուն մրցընում է հարկի դրույքի վերաբերյալ ծանուցում ստանալուց 14 որից վոչ ուշ։

7. 44-րդ հոդվածի համաձայն — տոմարագրական վկայականները պետք է միշտ լինեն այն ձեռնարկություններում, վորոնց համար վերցված են։

8. 55-րդ հոդվածի համաձայն — անձնական արհեստներով զբաղվող անձինք, տոմարագրական վկայականներ չվերցնելու համար, յենթարկվում են տուգանքի հարկի դրույքի կրկնակի չափից վոչ ավել։

9. 54-րդ հոդվածի համաձայն—շրջանառության հանդեպ տոկոսային հարաբերությամբ վորոշվող հարկի յենթակա ձեռնարկությունները և արհեստները, տոմարագրական վկայականներ չվերցնելու համար, տուգանվում են առաջին ժամկետի կանխավճարի կրկնակի չափից վոչ ավել։

10. 57-րդ հոդվածի համաձայն—տոմարագրական վկայականներ վերցնելու մասին կանոնադրությունը խախտող անձինք, հարկային հսկողության կողմից սահմանված ժամանակամիջոցում (յոթ որից վոչ պակաս), յեթե չներկայացնեն համապատասխան տոմարագրական վկայական, այդպիսիների ձեռնարկությունները, բացի 54-րդ հոդ. նշված տուգանումներից, Ուղղակի Հարկերի տեսուչը կարող ե փակել մինչև տոմարագրական վկայական ներկայացնելը։

11. 58-րդ հոդվածի համաձայն—տոմարագրական վկայականները ժամանակին չվերցնելու համար, յեթե այդպիսիք վերցված են մինչ հարկային հսկողության կողմից այդ մասին պահանջ ներկայացնելը, տուգանք ե դրվում 54 և 55 հոդ. հոդ. նշված տուգանքների մի հինգյերրորդականից վոչ ավել։

ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1) Յեկամտային հարկի հրահանգի 111-րդ հոդվածի համաձայն, բոլոր տնայնագործները և արհեստավորները, ամեն տարի նոյեմբեր 15-ից վոչ ուշ պարտավոր են ներկայացնել իրենց բնակատեղի Ուղղակի Հարկերի տեսուչներին դեկլարացիա (հայտարարություն) իրենց յեկամուտների մասին։

2) Կանոնադրության 2-րդ հոդվածի համաձայն, դեկլարացիա պետք ե ներկայացնեն տնայնագործներից, արհեստավորներից և արդյունաբերական ձեռնարկատերերից նրանք, վորոնց նախընթաց տարվա յեկամուտը գերազանցել ե՝

ա) Յերևան և Լենինական քաղաքներում 2-րդ գոտի 700 ռ.

բ) Բոլոր գավառային կենտրոններում բացի Քեշիշքենդ և Մեղրի քաղաքներից 3-րդ գոտի 600 ռ.

գ) Հայաստանի մնացած բոլոր վայրերում այլև Քեշիշքենդ ու Մեղրի քաղ. 4-րդ գոտի 500 ռ.

3) Կանոնադրության 7-րդ հոդ. «բ»

կետի համաձայն, յերեքից վոչ ավել բանվորներ ունեցող տնայնագործական և արհեստագործական ձեռնարկությունների յեկամուտները հարկադրվում են յեկամտային հարկի № 2 ցանկով։

4) Կանոնադրության 7-րդ հոդվածի «Գ» կետի համաձայն, շրջանառության հանդեպ տոկոսային հարաբերությամբ վորոշվող արհեստահարկի յենթակա արդյունաբերական ձեռնարկությունների յեկամուտները հարկադրվում են յեկամտային հարկի № 3 ցանկով։

5) Դեկլարացիայի տպագրված բլանկները կարելի յե ստանալ Ուղղակի Հարկերի տեսուչի գրասենյակից (§112)։

6) Հարկատուները դեկլարացիա ներկայացնում են Ուղղակի Հարկերի տեսչություններին, բաց կամ փակ ծրարով (§113)։

7) Դեկլարացիա ընդունող անձը իր ստորագրությամբ ընդունման մասին վկայական է տալիս (§114)։

8) Հարկատուների կողմից ներկայացված դեկլարացիաների մեջ պետք է ցույց տրվեն հետևյալ տեղեկությունները՝

ա) Ազգանուն, անուն և հայրանուն ու բնակավայրը (հարկատուի հասցեն)։

բ) Հարկատուի բոլոր յեկամուտների աղբյուրների թվումը, մատնանշելով աղբյուրների վայրը։

գ) Ընդհանուր (валовой) յեկամուտի գումարը ըստ ամեն մի աղբյուրի, ծախսերի գումարը ըստ ամեն մի աղբյուրի և զուտ յեկամուտը։

դ) Ցույց տալ հարկատուի և նրա ընտանիքի կողմից զբաղեցրած բնակարանների մակարդակը և նրա ոգտագործության հետ կապված ընդհանուր ծախսը առ 1-ն հոկտեմբերի։

յե) Հարկատուն անցյալ տարում ոգտագործել է արդյոք վարձու ծառայողներ, ովքեր և ինչ թվով։

զ) Հարկատուի ընտանիքի կազմը առ 1-ն հոկտեմբերի, ցույց տալով ընտանիքի անդամների ազգանուն, անուն, հայրանուն, տարիքը ու նրանց հարաբերությունը դեկլարացիա տվող անձի հանդեպ, մատնանշելով ընտանիքի այն անդամներին, վորոնք ունեցել են ինքնուրույն յեկամուտներ և խնամքի տակ գտնվող այն անձանց, վորոնք ընտանիքի անդամների թվին չեն պատկանում։

ե) Բացի այդ հարկատուներին հնարա-

վորություն է տրվում դեկլարացիաների մեջ տեղավորել և այլ լրացուցիչ տեղեկություններ։

ը) Դեկլարացիան անպայման պետք է ստորագրված լինի հարկատուի կողմից։

9) Այն տնայնագործները և արհեստավորները, վորոնց յեկամուտները հարկադրվում են № 2 ցանկով և վորոնք իրենց խնամքի տակ ունեն յերեքից վոչ պակաս անձ, ոգտվում են հետևյալ արտոնություններով՝ (§10)

ա) Յերեք անձ խնամքի տակ ունեցող հարկատուների համար, հարկի չափը զեղջվում է 1/4 մասով։

բ) Չորս անձ և ավելի խնամքի տակ ունեցող հարկատուների համար հարկաչափը զեղջվում է 1/3 մասով։

Կանոնադրության 10-րդ հոդվածով նախատեսված վերոհիշյալ արտոնություններից ոգտվելու համար դեկլարացիային պետք է կցել տնատերի կողմից տրված վկայական, համապատասխան միլիցիայի վավերացումով այն մասին, վոր հիշյալ անձերը առ 1-ն հոկտեմբերի գտնվել են հարկատուի խնամքի տակ։

10) Դեկլարացիա չտալու կամ սահմանված

ժամկետից անց տալու համար № 2 ցանկով տուրքադրվող հարկատուները յենթարկվում են տուգանքի մինչև 100 ռ. գումարի, իսկ № 3 ցանկով տուքադրվողները մինչև 200 ռ. գումարի։

11) Հարկային մարմինների կողմից պահանջված, ի լրումն ներկայացրած դեկլարացիային, լրացուցիչ տեղեկություններ չներկայացնելու դեպքում, հարկատուն տուգանվում է նախկին հոդվածով նշված տուգանքի չափով։

12) Հարկատուները, դեկլարացիայում, կամ նրանց լրացուցիչ տեղեկություններում, նրանցից հասանելիք հարկաչափը պակասեցման նպատակով, ակնհայտնի սխալ տեղեկություններ հաղորդելու համար, պատասխանատվության են յենթարկվում քրեական կարգով։

13) Յեկամտահարկի վճարման ժամկետները՝

1-ին ժամկետ մարտի 15-ին
2-րդ » մայիսի 15-ին
3-րդ » հունիսի 15-ին
4-րդ » հուլիսի 15-ին

14) Այն դեպքում յերբ հարկատուի

կարծիքով իրեն յեկամուտը սխալ է հաշվըված, նա կարող է շրջանային հանձնաժողովի վորոշման դեմ բողոք տալ գավառային հանձնաժողովին սկսած ծանուցումը ստանալու որից։

15) Բողոքի ներկայացնելը չի կասեցնում հարկի վճարումը սահմանված ժամկետներին։

16) Այն դեպքում, յերբ հարկատուն իրեն վրա հաշվված հարկը համարում է ճիշտ, բայց այդպիսին ուժերից վեր է, նրան թույլատրվում է դիմում տալ Ֆինբաժնին, Հարկերի գանձման կանոնադրության կարգով։

17) 25 ռ. ավելի գումարի դիմում կամ բողոք ներկայացնելու բոլոր դեպքերում, դիմումին փակցվում է դրոշմանիշ 2 ռ. արժողությամբ, իսկ 25 ռ. ցածր·դրոշմատուրքից ազատվում է։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
ԱՆՎԱՆ
Публичная Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0203445